ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ»)

Գ. Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

XIX դ. վերջերին՝ համիդյան արյունալի ջարդերից հետո և հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանի երբեմնի շեն քաղաքներն ու գյուղերը ամայացան, հազարավոր հայեր բռնեցին գաղթի ճամփան դեպի Եվրոպա, Մերձավոր Արևելքի տարբեր երկրներ, Ամերիկա և այլուր՝ ստեղծելով այդ երկրներում հայկական խոշոր համայնքներ։ Ճակատագրի բերումով հայ իրականության մեջ ծնունդ առավ մի նոր հասկացություն՝ Սփյուռք, այսինքն՝ աշխարհացրիվ հայություն։

Ներկայումս սփյուռքի ամենահոծ գաղթօջախը ամերիկահայ համայնքն է, որը համեմատաբար քիչ է ուսումնասիրված։ Այդ գաղութի ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն մեր ժողովրդի պատմության և մշակույթի ամբողջական քննության համար, քանի որ գաղթօջախների պատմությունը հայ ժողովրդի պատմության անքակտելի մասն է կազմում։

Գաղթօջախների կյանքի ուսումնասիրության գործում մեծ դեր ունի մամուլը, որի նպատակամետ ու բարեխիղճ հետազոտությամբ կարելի է լրացնել սփյուռքահայության ինչպես անցյալ, այնպես էլ ներկա կյանքի մասին պատկերացումը։

Ամերիկահայ մամուլը հարուստ ավանդույթներ ունի։ Սկիզբ առնելով «ամերիկահայ մամուլի հայր» հորջորջված Հայկակ Էկինյանի «Արեգակ» պարբերականից՝ 1888-ին, շուրջ մեկ հարյուրամյակ այն ներկայացնում է ամենատարբեր ուղղության և բնույթի բազմաթիվ պարբերականներ։

Ամերիկահայ մամուլի էջերում արտացոլված են անցյալ դարի 90-ական թվականներից մինչև մեր օրերը ձգվող հայ իրականությունը, հայ ազգային ազատագրական շարժումները, հայոց ջարդերն ու XX դ. սկզբի ցեղասպանությունը, ազգային, քաղաքական կուսակցությունների գործունեությունը, ամերիկյան ու համաշխարհային մամուլի կարծիքը հայկական հարցի մասին, առաջին աշխարհամարտը և Հայաստանի հանրապետության ծնունդը, հայկական հարցը խաղաղության ու հաշտության հետպատերազմյան խորհրդաժողովներում, Սովետական Հայաստանի հառնումը, հայ գաղթականների տեղաշարժն ու հայրենադարձությունը դեպի մայր հայրենիք, շինարարական աշխատանքները Հայաստանում և այլն։

Հայերի արտագաղթը Ամերիկա նշանակալի չափերի է հասնում անցյալ դարի վերջին քառորդին։ Մինչ այդ, Ամերիկա էին մեկնել սոսկ անհատներ, այդ թվում և՝ նշանավոր հրապարակախոս Խ. Ոսկանյանը[1]։ 1894—95 թթ. ջարդերի հետևանքով արտագաղթողների հոսքը շատացավ և դարավերջին հայերի թիվը Ամերիկայում հասավ 16 հազարի, որոնց մեծ մասը ավետարանական հայեր էին։ Հենց այդ ժամանակ էլ հիմք դրվեց ԱՄՆ-ի ավետարանական համայնքին, որը մինչև օրս ունի իր որոշակի ազդեցությունը ամերիկահայ ստվարաթիվ համայնքում։

«1894—95 թվերին Խարբերդի գավառեն մոտավորապես ամեն տուն զարիպ մը ուներ Ամերիկա և թեև խարբերդցիները նյութական օժանդակություն կստանային իրենց զարիպներեն, բայց հայ տունն ալ կամայանար»[2]։

---

[1] Ճիզմեճյան Մ., Պատմություն ամերիկահայերի քաղաքական կուսակցությանց, Ֆրեզնո, 1930, էջ 1։

[2] Հայաստանի կոչնակ, 1926, № 5, էջ 91։

Հայ աշխատավորական զանգվածները անծանոթ լինելով նոր աշխարհի բարքերին և, հատկապես, չտիրապետելով լեզվին, անարգել շահագործման էին ենթարկվում գործարանատերերի կողմից։ Նրանք մեծ մասամբ ստիպված էին աշխատելու երկաթի, ածխի հանքավայրերում, քիմիական և կոշիկի գործարաններում, օրական 10—14 ժամ՝ փոխարենը ստանալով չնչին վարձատրություն։

Դաղութի մտավորականները, որոնց մեծ մասը ավարտել էր Արևմտյան Հայաստանի միսիոներական կոլեջները և վերադարձել Ամերիկա, մամուլի և գրականության միջոցով աշխատում էին ամերիկացիներին ծանոթացնել հայ ժողովրդի դարավոր տառապանքներին՝ ջանալով հանրային կարծիք ստեղծել հայոց դատի շուրջ։

Դեռևս մինչև 1915 թվականը, ամերիկահայ համայնքի տարբեր հոսանքներ սկսեցին հիմնել իրենց եկեղեցիները, մշակութային օջախները և մամուլը։ 1913 թ. տվյալներով Ամերիկայի տարբեր քաղաքներում լույս էր տեսնում 19 անուն թերթ և պարբերական, որոնցից 17-ը՝ հայերեն, իսկ երկուսը՝ անգլերեն։ Քաղաքական բոլոր հոսանքները, կրոնական հարանվանությունները, հայրենակցական միությունները և ազգային այլ կազմակերպություններ ունեին իրենց պարբերականները, քաջ գիտակցելով, որ մամուլը էական դեր ունի նոր համայնքի կազմավորման, նրա կյանքի ուղեգծին այս կամ այն հարցում կողմնորոշում տալու համար։

Ամերիկահայ մամուլն իր էջերում պարփակում է ճոխ գրականություն։ Նրան աշխատակցել են արևմտահայ թե արևելահայ, սփյուռքահայ թե սովետահայ նշանավոր գրողներ, հրապարակագիրներ, գրաքննադատներ։ Նրա էջերում թարգմանաբար հրատարակվել են նաև ամերիկյան, անգլիական, ռուսական, գերմանական, ֆրանսիական գրականության լավագույն նմուշները։

Ամերիկահայ մամուլի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի շուրջ 70 տարի նախանձելի կանոնավորությամբ լույս տեսած «Հայաստանի կոչնակ» (նախապես՝ «Կոչնակ», «Կոչնակ Հայաստանի») պարբերաթերթը, որ 60 տարի իբր շաբաթաթերթ տպագրվելուց հետո, մոտ մեկ տասնամյակ էլ լույս տեսավ իբրև ամսաթերթ. «Հայաստանի կոչնակի» առաջին համարը հրատարակվել է ձեռագիր (հավանաբար՝ խմորատիպ), 1899-ին՝ պատվելի Սանդիկյանի խմբագրությամբ։ Իսկ տպագիր «Կոչնակի» առաջին համարը լույս է տեսել 1900 թ. դեկտեմբերի 15-ին, Բոստոնում։ Խմբագիրը՝ հայախոս Հերբերտ Ալենը, ծագումով ամերիկացի էր՝ ծնված Հայաստանում։

Թերթն ունեցել է ընթերցողների լայն շրջանակ և իր շուրջը համախմբել է թե՛ ամերիկահայ և թե՛ սփյուռքահայ այլ գաղթօջախների տարբեր հասարակական և քաղաքական հոսանքների ներկայացուցիչներին։ Բացի ամերիկահայ գաղութից, ուշագրավ նյութ է պարունակում նաև սփյուռքահայ գաղթօջախների մասին ընդհանրապես։

Մինչև 1910 թվականը «Կոչնակը» հրատարակվել է Բոստոնում և կոչվել «Կոչնակ Հայաստանի», այնուհետև լույս է տեսել Նյու Յորքում։ Մինչև 1918-ը կոչվել է «Կոչնակ», իսկ 1918 թվականից՝ «Հայաստանի կոչնակ»։ Սկզբում եղել է շաբաթաթերթ, իսկ 1916-ից՝ միամսյա հանդես։ «Հայաստանի կոչնակը» սկզբնական շրջանում հրատարակվում էր ամերիկյան միսիոներական կազմակերպությունների օգնությամբ, իսկ ապա ստիպված եղավ ապավինել միայն ամերիկահայ ավետարանականների օժանդակությանը։ 1968 թ. դեկտեմբերին դադարեց լույս տեսնելուց։

Ստեղծման առաջին իսկ օրվանից պարբերականը իրեն հայտարարել է անկուսակցական, չափավոր-պահպանողական շաբաթաթերթ, թեև իրականում կրոնական ուղղություն կրող պարբերական էր և իր գործունեության շրջանում որոշակիորեն դրսևորում էր բուրժուական հոսանքներին հատուկ մտածելակերպ, դրվատում ամերիկյան ապրելակերպը, բուրժուական հասարակական ու պետական գործիչներին՝ ջանալով տարածել սեփական պատկերացումը ամերիկյան հոսանքների մասին։

Հայտնի է, որ ամերիկյան միսիոներական կազմակերպությունները միշտ կապված են եղել ամերիկյան բուրժուական հոսանքների հետ և անգամ ֆինանսավորվել ԱՄՆ-ի կառավարական շրջաններին մոտ կանգնած կազմակերպությունների կողմից։

«Հայաստանի կոչնակը» հրապարակ էր իջնում մի ժամանակաշրջանում, երբ ողջ հայությունը դեռ գտնվում էր 1894—96 թվականների զանգվածային շարդերի ծանր տպավորության տակ։ Բայց սթափվելով, արտասահմանի հայությունն արդեն սկսել էր վերախմբավորել ուժերը՝ համիդյան ոճրագործ վարչակարգի դեմ պայքարն ու կռիվը նոր թափով շարունակելու համար։

«Հայաստանի կոչնակը» իր էջերում լուսաբանել է արևմտահայ և գաղթահայ հասարակական կյանքի կարևոր իրադարձությունները, որոշ ժամանակ խանդավառվել օսմանյան սահմանադրության վերահաստատումով, նույնիսկ հավատացել երիտթուրքերի բարեկարգություններին, իսկ 1911 թ. արդեն պարբերականը համոզված էր, որ երիտթուրքերը անվստահելի «դաշնակիցներ» են հայերի համար։ Այդ տարում «Հայաստանի կոչնակի» էջերում երևացին Անանիկյանի, Վահան Քյուրքչյանի (Ռուսուս և Արգոս գրական ծածկանուններով) հոդվածները, ինչպես և՝ արտատպումներ «Նյու Յորք սան», «Նյու Յորք Ամերիքն» թերթերից, ուր մերկացվում էր երիտթուրքերի հայահալած քաղաքականությունը։ «Հայաստանի կոչնակը» քննադատել է նաև Լոզանի «դաշնագիրը», այն անվանելով «հաղթողների» խայտառակ պարտություն։

«Հայաստանի կոչնակը» անդրադարձել է հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանին՝ ցեղասպանությանը, որը ծրագրել և բարբարոսաբար իրագործում էր երիտթուրքերի կառավարությունը առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող տարիներին։ Պարբերականի էջերում տպագրվել են բազմաթիվ հոդվածներ, ականատեսի վկայություններ, որոնք պարունակում են սահմռկեցուցիչ փաստեր այդ տարիներին արևմտահայության նկատմամբ կիրառվող մասսայական շարդերի տեղահանությունների և բռնությունների մասին։

1922 թ. «Հայաստանի կոչնակը» տպագրեց մի հոդվածաշար (№ 1, 3, 11, 74), որտեղ ականատեսի վկայությամբ, ընթերցողը ծանոթանում է աքսորավայրերի փաստացի նկարագրության մանրամասնություններին, հատկապես Դ. Վարուժանի և Ռ. Սևակի կյանքի վերջին օրերին՝ Ջանղըրի աքսորում գտնվելու ժամանակ։

Հակառակ դավանական նեղմտությունը դատապարտող ելույթներին, «Հայաստանի կոչնակը» ավելի շատ խոսափողը հանդիսացավ ավետարանականների գաղափարախոսության, քան թե աշխատավոր, հայրենասեր հայ զանգվածների։

Դարասկզբին, երբ այն լույս էր տեսնում ամերիկյան միսիոներական կազմակերպությունների նյութական օգնությամբ, առավել ոգևորությամբ էր տուրք տալիս սեփականատիրական խավերի գաղափարախոսությանը, առավել բարձրագոչ պրոպագանդում ամերիկյան ապրելակերպը։

Դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ստեղծված հայանպաստ կազմակերպությունները (Հայ ազգային միությունը, մամուլի գրասենյակը, Հայ-ամերիկյան միությունը, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն) իրենց գործունեությամբ աշխատում էին հանրային կարծիք ստեղծել ամերիկյան կառավարական շրջանակներում և հայ ժողովրդի փրկությունը կապում էին ամերիկյան կառավարության ուղեգծի հետ։ «Հայաստանի կոչնակի» գործունեությունը մինչև քսանական թվականները ընթացել է հիմնականում այդ ուղղությամբ, իդեալականացնելով արևմտյան իրավակարգը և պրոպագանդելով ամերիկյան կենցաղն ու բարքերը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը վիթխարի արձագանք գտավ ԱՄՆ-ի ժողովրդական լայն զանգվածների մեջ և հատկապես խոր ազդեցություն գործեց ամերիկյան բանվորների վրա։

Լինելով բուրժուական գաղափարախոսության պաշտպան, «Հայաստանի կոչնակը» ձայնակցում էր ԱՄՆ-ի բուրժուական մամուլի գործիչներին՝ դիմակայելու «կարմիր վտանգին», որը սպառնում էր ամերիկյան ազատ հաստատության ընտանիքին, եկեղեցուն և կառավարությանը[3]։

1920 թվականի աշնանը մեր ժողովուրդը ապրեց դաժան փորձությունների մի նոր շրջան։ Քեմալական Թուրքիայի զորքերը Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ ներխուժեցին Հայաստանի սահմանները, մահ ու ավերածություններ սփռելով այս անգամ արդեն Արևելյան Հայաստանում՝ իրենց նախորդների որդեգրած ցեղասպանության հրեշավոր ծրագիրը ամբողջացնելու մտադրությամբ։ Սակայն ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքը։

Սովետական իշխանության հաստատումը շրջադարձային փուլ դարձավ հայ ժողովրդի պատմության մեջ։ Իրականացավ մեր ժողովրդի դարավոր երազանքը՝ Հայաստանը ձեռք բերեց սոցիալ-տնտեսական և ազգային ազատություն, և Սովետական Ռուսաստանի օգնության շնորհիվ նրա արևելյան հատվածը փրկվեց ֆիզիկական բնաջնջումից։

«Հայաստանի կոչնակը», որը որպես չեզոք թերթ ձգտում էր խուսափել հստակ քաղաքական դիրքորոշումից, ի տես Սովետական Հայաստանի հաջողությունների, խոստովանեց, որ առանց սովետական իշխանության, հայ ժողովուրդը ի վիճակի չէր լինի իրագործելու իր դարավոր հույսերը։ Այս առիթով գրված խմբագրականներից մեկում «Հայաստանի կոչնակը» հավաստում է. «Մենք կսիրենք Հայաստանը ոչ միայն անոր համար, որ անկարող ենք տապալելու խորհրդային վարչաձևը, այլև անոր համար, որ անկարող ենք առանց խորհրդային օգնության զարգացնելու և պահպանելու փոքրիկ Հայաստանը — մեր ազգային գոյության միակ ապավենը։ Ահա թե ինչու «Հայաստանի կոչնակ» ջերմապես հայաստանյան է, թեև անկախ, անկուսակցական»[4]։

«Անցյալ տարին» հոդվածում «Հայաստանի կոչնակի» քաղաքական տեսաբան Մ. Անանիկյանը, անդրադառնալով 1921-ի քաղաքական իրադարձություններին և Ալեքսանդր Մյասնիկյանի գլխավորած կառավարության ձեռնարկումներին, գրում էր. «Այս վերջինը (այսինքն՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորած կառավարությունը — Գ. Բ.) նախորդ կառավարումներեն շատ ավելի արդյունավետ ջանքեր ըրավ ժողովրդականություն շահելու և երկրի գործերը վարելու արդար, չափավոր և նույնիսկ ներողամիտ ոգով»[5]։ Իրեն անկախ, չեզոք և անկուսակցական հայտարարելով հանդերձ «Հայաստանի կոչնակը» այնուամենայնիվ պրոպագանդում էր Սովետական Հայաստանի վերելքը, քաջ գիտակցելով, որ այն հայերի միակ հայրենիքն է։

Չնայած իր ոչ հաստատուն քաղաքական տեսակետներին, պարբերականը իր գոյության ավելի քան 60 տարիների ընթացքում հանդիսացել է ոչ միայն ամերիկահայության, այլև ամբողջ սփյուռքահայության լուրջ պարբերականներից մեկը, որին աշխատակցում էին թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ մտավորականներ, գրողներ, քաղաքական և հասարակական տարբեր հոսանքների ներկայացուցիչներ։ «Հայաստանի կոչնակին» աշխատակցել են Արշակ Չոպանյանը, Ռուբեն Որբերյանը, Արշակ Ալպոյաճյանը, Մինաս Չերազը, Շիրվանզադեն, Ավետիք Իսահակյանը, Վահե Հայկը, Բենիամին Նուրիկյանը և շատ ուրիշներ։ «Հայաստանի կոչնակն» իր խմբագրականներում իրավացիորեն հիշեցնում էր, որ ինքը մտավորականության լավագույն ներկայացուցիչների «ժամադրավայրն» է։

«Հայաստանի կոչնակի» համար առավել բեղուն էր Հովհաննես Ավագյանի խմբագրության շրջանը։ Լինելով նրբամիտ գրականագետ, նա կարողա-

---

3 Նույն տեղում, 1920, № 9, էջ 263։

4 Նույն տեղում, 1931, № 12, էջ 239։

5 Նույն տեղում, 1922, № 1, էջ 8։

ցավ «Հայաստանի կոչնակի» շուրջ համախմբել սփյուռքի լավագույն մտավորականներին։ Ամերիկահայ ժամանակակից վաստակաշատ գրողներից մեկը՝ Վահե Հայկը մեծ դրվատանքով է խոսում Հովհաննես Ավագյանի և նրա խմբագրած «Հայաստանի կոչնակի» մասին[6]։ Նրա խմբագրած պարբերականը օրը օրին հետևում էր Սովետական Հայաստանի գրական կյանքին, գրախոսում և ժողովրդականացնում վերածնված հայրենիքի գրական հունձքը, գրողների նոր երկերը։

«Հայաստանի կոչնակը» մեծ տեղ է տվել ամերիկահայ կյանքի հուզող հարցերին։ Ընթերցողը, թերթելով այդ պարբերականը, կարող է տեղեկություններ ստանալ թերթի հրատարակության տարիների ընթացքում ամերիկահայությանը և սփյուռքահայությանը հուզող խնդիրների, կարևոր իրադարձությունների մասին։

Հետաքրքրական է «Հայաստանի կոչնակի» վաղ շրջանի խմբագիրներից Կ. Մանավյանի «Ակնարկ ամերիկահայ գաղութին վրա» հոդվածը, որը պարունակում է հետաքրքիր փաստեր ամերիկահայ գաղութի պատմության տարբեր շրջանների մասին։ Այստեղ կան տվյալներ առաջին պանդուխտ հայերի՝ Ամերիկա գալու մասին, որը վերաբերում է XVII դ. 2-րդ տասնամյակին, երբ պարսկաստանցի Ջոն Մարտինը Միացյալ նահանգներում սկսեց զբաղվել ծխախոտագործությամբ։ Հետագայում երկու հայեր հաստատվում են Վիրջինիա նահանգում և զբաղվում շերամապահությամբ։ Թերթը փաստեր է հաղորդում այն մասին, որ ամերիկյան միսիոներական ընկերությունների ջանքերով XIX դ. կեսերից Արևմտահայաստանում հիմնվում են «Օփրատ» և «Ռոբերտ» կոլեջները, որտեղ սովորում են հայ երիտասարդները։ Այս կոլեջների շրջանավարտներից էին, որ XX դ. սկզբներին կազմում էին ամերիկահայ մտավորականության գլխավոր մասը։ Ըստ Մանավյանի այս հոդվածի՝ 1926 թ. ամերիկահայ գաղթօջախում ապրում էր մոտավորապես 80 հազար հայ, մեծ մասամբ տեղաբաշխված Նյու Յորքում, Բոստոնում, Ուստրում, Կալիֆոռնիայի Ֆրեզնո և Լոս Անջելես քաղաքներում։ Հայ աշխատավորը հիմնականում ընդգրկված էր արդյունաբերության մեջ՝ մետալուրգիական, քիմիական, տեքստիլ և կոշիկի գործարաններում։ Կային և վաճառականությամբ զբաղվող հայեր, հատկապես՝ գորգավաճառներ, որոնք բավականին հաջողության էին հասել, թեպետ շատերը կուլ գնացին ամերիկյան խոշոր առևտրական ձեռնարկություններին։

«Հայաստանի կոչնակը» հետաքրքիր տեղեկություններ է տալիս Կալիֆոռնիայի նահանգի այգեպանների, մասնավորապես՝ չոր մրգի վաճառքի ասպարեզում ընդգրկված առևտրականների մասին, որոնց մի մասը նյութական նախանձելի դիրքի էր հասել։ Հետագայում համաշխարհային տնտեսական ճգնաժամը նրանց էլ ցնցեց, և շատերը սնանկացան։

Դարասկզբին ամերիկահայ գաղութն արդեն ուներ իր մտավորականությունը, որի կազմում կային հայտնի բժիշկներ, գիտնականներ, համալսարանական դասախոսներ և պրոֆեսորներ։ Ամերիկահայ մտավորականությանը մտահոգում էր ապազգայնացման խնդիրը։ «Հայաստանի կոչնակը» բազմիցս անդրադարձել է այս հարցին, արտահայտել այն միտքը, որ ամերիկահայության երկու սերունդ միայն ի վիճակի կլինի պահպանել իր ազգային լեզուն և ոգին, քանի որ նրանց կապերը անցյալի, իրենց լքված բնաշխարհի, տուն ու օջախի հետ դեռևս ուժեղ էին, հիշողությունները՝ թարմ։ Ամերիկահայ մտավորականությունը քաջ գիտակցում էր, որ ոչ քրիստոնյա երկրներում հայ ժողովրդի համար ավելի հեշտ է պահպանել իր ինքնուրույնությունը, մշակույթը և լեզուն, քան Ֆրանսիայի և ԱՄՆ-ի նման երկրներում։ Հանդեսի էջերում հատկապես տագնապ է արտահայտված նոր սերնդի հայեցի ապագայի նկատմամբ, սերունդ, որը շատ շուտ ընկավ «Ջազ բենդի և ամերիկյան

---

6 Վահե Հայկ, Լուսավոր դեմքեր մեր օրերուն վրա, Բեյրութ, 1972, էջ 282։

սանձարձակ բարքերի գիրկը»[7]։ Պրոֆեսոր Թումանյանը թերթի էջերում գրում է. «Հազարավոր հայեր տարեցտարի կխորթանան և կանհետանան անձայն ու անշշուկ նոր աշխարհի մեջ»։ Նա շատ է մտահոգված գաղութի գոյատևման խնդրով և մեծ հույսեր է կապում ամերիկահայ ուսանողական միության, կրթասիրաց լիգայի և այլ կազմակերպությունների հետ, որոնք նոր սերնդի հոգում հայրենասիրություն և հայ մշակույթի նկատմամբ սեր արծարծելու գործում մեծ անելիքներ ունեն։ Բայց «Հայաստանի կոչնակը» իր մի շարք խմբագրականներում սփյուռքի գոյատևման ամենահուսալի կովանը համարում էր Սովետական Հայաստանը։

Պարբերականի էջերում լայն տեղ է գտել համաշխարհային տնտեսական ճգնաժամի թեման, ճգնաժամ, որը ցնցեց ամբողջ կապիտալիստական աշխարհը և հատկապես նրա միշնաբերդ Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Ճգնաժամից տուժեցին հայ աշխատավորները ևս. նրանց մեծ մասը կորցրեց աշխատանքը, իսկ գործազուրկներից նրանք, որոնք անծանոթ էին երկրի օրենքներին, չէին կարողանում օգտվել կառավարական չնչին նպաստից։ Նրանք ստիպված քաղաքից քաղաք էին շրջում՝ աշխատանք փնտրելու հույսով։

«Հայաստանի կոչնակը» հաճախ հորդորում էր աշխատավորությանը՝ չշրջել քաղաքից քաղաք, քանի որ ամենուրեք նույն վիճակն է։ Հայ առևտրականներն էլ, հատկապես գորգի և չոր մրգի վաճառականները, եթե առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բավականին շահույթ էին ստացել, ապա ճգնաժամի տարիներին մեծ մասամբ սնանկացան։

Հայ բարեգործական ընդհանուր միությունը Նյու Յորքի և մյուս քաղաքների իր գրասենյակներում որոշ օգնություն է կազմակերպում հայ գործազուրկների համար՝ նրանց տալով չնչին նպաստ և ճաշարանում սնվելու տոմսակներ՝ շաբաթական մեկ-երկու անգամ։

1933 թ. Նյու Յորքում կազմվում է «Նյու Յորքի հայ անգործների միությունը»։ Միության նպատակն էր կազմակերպել հայ գործազուրկներին և համապատասխան իշխանություններից պահանջել աշխատանք։

Ճգնաժամի տարիներին «Հայաստանի կոչնակը» բազմաթիվ հոդվածներով ու խմբագրականներով նկարագրել է ԱՄՆ-ի տնտեսության և աշխատավորական զանգվածների ծանր դրությունը։ Այդ ժամանակաշրջանի խմբագրականներից մեկում կարդում ենք. «Կապիտալիստական ռեժիմը հիվանդ է, ծանր հիվանդ, ախտանիշները կշատնան, տնտեսական և անկե բխող քաղաքական տագնապը իր մագիլներուն մեջ կգալարե աշխարհը։ Կապիտալիստական երկիրներուն մեջ մոտ 50 միլիոն գործազուրկ կա, այսինքն մոտ 150 միլիոն անոթի։ Իսկ Խորհրդային Միության մեջ գործող ձեռքերու մեջ պակաս կա»[8]։ Այնուհետև զուգահեռ է անցկացվում կապիտալիստական երկրների աշխատավորական զանգվածների անմխիթար դրության և Սովետական Միության բանվորների նյութական վիճակի բարելավման, բնակարանային շինարարության, սոցիալական ապահովվածության և սոցիալիստական հասարակարգին հատուկ այլ առավելությունների միջև։

Վաղը Հայաստանը պիտի դառնա դրախտ մը, երկիր մը,— գրում է «Կոչնակը»,— ուր մարդը մարդուն ձեռքով շահագործելու, տառապեցնելու անարդ ու բարբարոս սիստեմի վերջ գտած է. երկիր մը, ուր թագավորե աշխատանքի օրենքը»[9]։

Պարբերականը հաճախ կարճ լուրեր է տպագրել ԱՄՆ-ի այս կամ այն հայաշատ քաղաքի մասին։ Դրանցից մեկում կարդում ենք, որ 80-ական թվականներին Սան Ֆրանցիսկոյում ապրում էին 2000 հայ, Օքլենդում՝ 1000։ Նրանց մեծ մասը զբաղվում էր արհեստներով, առևտրով և այլն։ Երկու քաղաքներում էլ գործում էին ավետարանական և առաքելական եկեղեցիներ,

---

7 Հայաստանի կոչնակ, 1931, № 24, էջ 747։

8 Նույն տեղում, № 29, էջ 904։

9 Նույն տեղում, էջ 905։

Բարեգործականի մասնաճյուղեր, Կարմիր խաչի և հայրենակցական միություններ, որոնք կազմակերպում էին զանազան միջոցառումներ՝ ձգտելով վառ պահել գաղութի ազգային ոգին։ 30-ական թվականներին շարունակվում էր հայրենակցական միությունների կազմավորումը։ 1931 թ. հիմնվում է վասպուրականցիների հայրենակցական միությունը, որի նպատակն էր՝ հիմնել նոր Վասպուրական ավան՝ Սովետական Հայաստանի մեջ, Ամերիկահայ գիտական միությունը, որը ամերիկահայ գաղթօջախի կյանքում կատարել է դրական որոշակի դեր։ Այս միությունը, որին անդամակցել են բազմաթիվ մտավորականներ, աշխատել է ամերիկահայերին իրազեկ դարձնել Հայաստանում կատարվող կարևոր իրադարձություններին։

Պարբերականը մի կողմից ջատագովում է բուրժուական, կապիտալիստական հասարակարգը, բայց երբ այդ նույն հասարակարգը տնտեսական ճգնաժամի տարիներին կանգնում էր կրախի առաջ, նա չէր կարող ուշադրություն չդարձնել սոցիալիստական հասարակարգի առավելություններին։

Հայաստանի նոր վարչակարգի հանդեպ «Հայաստանի կոչնակի» որդեգրած դրական վերաբերմունքը դրսևորվեց նաև «Հայաստանի հանրապետությունը» խմբագրականով, որը տպագրվեց 1923-ի հունվարյան համարի մեջ։

«Հարկ կա՞ արդյո՞ք ըսելու,— գրում էր «Հայաստանի կոչնակը»,— թե Հայաստանի հանրապետությունը մեր սիրալիր աջակցության այնչափ իրավունք ունի, որչափ որ ունին մեր տարագիր ազգակիցները։ Եթե հայ հայրենիքը մեր իդեալն է՝ ահա Երևանի մեջ ունինք հայրենիք մը, թեև սահմանափակ, որ թերևս սաղմնային վիճակի մը մեջ է։ Չենք գիտեր, թե մեր թափառական ազգակիցները ե՞րբ պիտի կարենան համախմբվել սեփական հայ հողի մը վրա։ Բայց գիտենք, թե այսօր կա Հայաստան մը մեր հինավուրց Մասիսին ստորոտը։ Կա հայ կյանքի վառարան մը, Ախուրյան գետի մյուս կողմը։ Գիտնանք արժեքը այդ վառարանին» (1923, № 4)։

«Հայաստանի կոչնակի» համակրանքը դաշնակցության նկատմամբ աստիճանաբար սառչում է, երբ 30-ական թվականներին ամերիկահայ գաղութում բավականին սրվում են քաղաքական վեճերն ու հակամարտությունները։

Մյուս կողմից տարեցտարի, Սովետական Հայաստանն իր հաջողություններով, իր ձեռքբերումներով ավելի ու ավելի էր մտնում սփյուռքահայ կյանքի մեջ։ Սփյուռքահայությունը մոտիկից էր ծանոթանում իր վերածնված հայրենիքին և հպարտանում նրանով։

1935 թ. ամերիկահայ գաղութը խանդավառությամբ ձեռնամուխ եղավ տոնելու Սովետական Հայաստանի 15-րդ տարեդարձը և իր պատվիրակությունը ուղարկեց Սովետական Հայաստան։ Այս առթիվ Ամերիկայի ՀՕԿ-ի (Հայաստանի օգնության կոմիտե) տեղեկատու բյուրոյի խնդրանքով սփյուռքահայ հանրածանոթ մտավորականներից շատերը իրենց հոդվածներով հանդես եկան ամերիկահայ տարբեր պարբերականներում։

«Հայաստանի կոչնակը» ևս տպագրում է նման հոդվածներ։ Ահա թե ինչ է գրում նախկին դաշնակցական գործիչ, Կոլումբիայի համալսարանի դասախոս Սեթ Արսենյանը, որը փետրվարյան հակահեղափոխության պարտությունից հետո փախել էր Հայաստանից և ապաստան գտել ԱՄՆ-ում. «Տրված քաղաքական պայմաններու ներքև հայ ժողովուրդի գոյությունը Հայաստանի մեջ ջնջման ենթակա էր առանց ռուսական հովանավորության կամ ուղղակի աջակցության...»։ Այնուհետև նա նկարագրում է հայ ժողովրդի բարգավաճումը ռուս մեծ ժողովրդի հովանավորության տակ։ «Տարակույս չունիմ,— գրում է նա,— որ իրավակարգերու ներշնչող միջավայրին շնորհիվ Խ. Հայաստանը կարճ ժամանակեն պիտի արտադրե աշխույժ երիտասարդ գիտնականներ, որոնցով հպարտ պիտի զգա ամբողջ աշխարհի հայությունը»[10]։

---

10 Նույն տեղում, 1935, № 47, էջ 1140։

Աղավնի Եկենյանը, որը 20—30-ական թվականներին մի քանի անգամ այցելել է Հայաստան, անձամբ տեսել Հայաստանի շինարարական աշխատանքները, իր տպավորություններով հանդես է եկել «Հայաստանի կոչնակի» էջերում։ Նա գրում է. «Դարերու շրջանին ազգերի գոյության պատմությունը երբեք արձանագրած չի եղեր աշխատանքի այնպիսի ստեղծագործական թափ, ինչպիսին արձանագրած է Խորհրդային Հայաստանի տասնհինգ տարվա պատմությունը»[11]։

Ամերիկահայ գաղթօջախները մեկուսացած և ինքնամփոփ կյանք չէին վարում։ Նրանք մասնակցում էին ամերիկյան և հայ ազգային տարբեր կուլտուրական և հասարակական միջոցառումներին։ Գաղթօջախների առաջադեմ ուժերը, հատկապես աշխատավորական զանգվածները, անկեղծորեն ուրախանում էին Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումներով և նույնիսկ հնարավորության սահմաններում իրենց բարոյական և նյութական լման էին ներդնում հայրենիքի վերաշինման գործում։ Երբ Լողանում վերջնականապես վիժեց Արևմտյան Հայաստանում կամ Կիլիկիայում արևմտահայերի համար «Ազգային օջախ» ստեղծելու գաղափարը և հրապարակ եկավ շուրջ 300 հազար գաղթականների Սովետական Հայաստան փոխադրելու հարցը, 20-ական թվականներին Սովետական Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց ներգաղթ կազմակերպելու մասին, ամերիկահայ գաղթօջախները սփյուռքահայ մյուս գաղթօջախների հետ միասին մեծ խանդավառությամբ դիմավորեցին պատմական այդ կարևոր որոշումը։ Ներգաղթի առաջին շրջանում մեծ թվով հայեր տեղափոխվեցին Սիրիայից և Հունաստանից, որտեղ աշխատավորության գրությունը ծանր էր։ Ըստ «Հայաստանի կոչնակի» տվյալների, 1922—1932 թթ. տասը տարվա ընթացքում, շուրջ 36 հազար հայեր ներգաղթեցին արտասահմանի տարբեր երկրներից։

Հայտնի հասարակական գործիչ և հրապարակագիր Մինաս Չերազը «Հայաստանի կոչնակի» 1922 թվականի մայիսյան համարների մեջ հրապարակեց «Բեռլինեն մինչև Լողան» հոդվածաշարը։ Առաջին հոդվածի մեջ հեղինակը, հիշեցնելով համիդյան, իթթիհատական և քեմալական շարժումների վնասները, Լոզանի դաշնագրությունը, կոչ է անում որդեգրել նոր կողմնորոշում և հայացքը սևեռել դեպի Սովետական Հայաստան։ «Հայաստանի հանրապետությունը ապագա ունի,— գրում էր նա,— անոր վրա կենտրոնացնենք մեր գորովն ու կորովը, մեր հացը կիսենք անոր հետ, նյութապես օգնենք մեր կարոտ գաղթականներուն, որ հոն երթան հաստատվին, անոր բարգավաճման նպաստեն՝ առանց անոր վրա բեռ ըլլալու»։ Հայրենադարձության իր ծրագիրը բացահայտելով՝ Չերազը շարունակում էր. «Աշխարհի հայ գաղութներեն յուրաքանչյուրը, շեն մը, գյուղ մը, ավան մը կամ քաղաք մը որդեգրելու է Հայաստանի մեջ և հոն իր նպաստներով ղրկելու և ապրեցնելու է հայ հողագործներու կամ արհեստավորներու ընտանիքներ, մինչև որ կտրենան իրենց ապրուստը ճարել առանց կառավարության վրա բեռ ըլլալու...»։

«Հայաստանի կոչնակի» էջերում համանման կոչերով հանդես եկան նաև Արշակ Չոպանյանը, Հ. Թոփչյանը, Շավարշ Արծրունին և ուրիշներ։

Արշակ Չոպանյանի «Հայաստանի մտավոր վերաշինությունը» նշանավոր հոդվածը լույս տեսավ «Հայաստանի կոչնակի» 1924 թվականի ապրիլ—մայիսյան երեք համարների մեջ։ Չոպանյանն արտասահմանի հայությանը հրավիրելով գործուն մասնակցություն ցուցաբերել Հայաստանի մտավոր և վերաշինական աշխատանքներին՝ հիմնավորում էր նաև Հայաստանի ապահով զարգացման համար ստեղծված քաղաքական պայմանները։ «Հայաստանի հանրապետությունը,— ասում էր նա,— ապահովեց իր ինքնավար գոյությունը՝ Նոր Ռուսիո հովանավորության տակ մտնելով, իր բովանդակ գյուղացիության հող և ուսում տալու հնարավորություն ունեցավ և թեւակոխեց ազգային, մշակութային և տնտեսական ընդհանուր ժողովրդական ներուժ

11 Նույն տեղում, № 46, էջ 1141։

զարգացման նորանոր դարաշրջան մը։ Ազգային մշակույթի զարգացումը այսօր Հայաստանի հանրապետության մեջ, ոչ թե շնորհ մըն էր բոլշևիկ Ռուսական տրված, այլ անոր կողմե ճանաչված բացարձակ իրավունք մը անոր կամքով և օգնությամբ իրականացած» (1924, № 17—19)։

Ամերիկահայ գաղութը իր մասնակցությունն է ցույց տվել ամերիկյան քաղաքներում կազմակերպվող մշակութային տարբեր միջոցառումներին։ 1930 թ. Մասաչուսեթսի նահանգի 300-ամյակի տոնակատարության առթիվ կազմակերպված ցուցահանդեսին մասնակցեցին նաև հայերը, որոնց տաղավարը իրենց նմուշների, մասնավորապես պատմական արժեք ներկայացնող նյութերի, ձեռագործների և լուսանկարների գեղարվեստական արժանիքների համար ստացավ երեք մրցանակ։ Ցուցահանդեսի միջոցով հայերը հնարավորություն ստացան իրենց մշակույթին հաղորդակից դարձնելու եվրոպական և ամերիկյան ժողովուրդներին։

«Հայաստանի կոչնակը» տարիների հոլովույթի հետ ժամանակ առ ժամանակ քննադատել է ամերիկյան ապրելակերպը, կյանքի սղությունը, ոճրագործությունները, իսկ 60-ական թվականներին՝ Վիետնամում շարունակվող անարդարացի պատերազմը։

Դեռևս 1968 թ. սեպտեմբերյան համարում պարբերականի խմբագիրը անհանգստացած հայտնում էր, որ ֆինանսական դժվարություններից դրդված ստիպված է դադարեցնել պարբերականի հրատարակումը, իսկ երեք ամիս անց «Հայաստանի կոչնակը» իսկապես անցավ պատմության գիրկը։

СТРАНИЦЫ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ США («АЙАСТАНИ КОЧНАК»)

Г. А. БАГДАСАРЯН

Резюме

Среди множества газет и журналов, выходящих в США на армянском и английском языках на протяжении ста лет, важное место занимает еженедельный журнал «Айастани кочнак» («Колокол Армении»), который издавался с 1900 по 1968 г. В течение всего периода существования журнал в основном оставался изданием общественно-литературного содержания, придерживался концепций, присущих буржуазным изданиям. Журнал содержал интересные материалы об армянских политических партиях, о буржуазной Республике Армении, о рождении Советской Армении и ее социалистических преобразованиях. «Айастани кочнак», ранее относившийся с симпатией к Армянской республике, выражавший даже сожаление по поводу политического краха дашнакских лидеров, вначале сдержанно относился к факту рождения новой социалистической Армении. Однако вскоре он вынужден был признать, что именно с Советской Арменией связаны вековые чаяния армянского народа, и стал пропагандировать ее достижения.